

խանք, սկսելով նոյն տառերուն յօրինման : — Արապեանք ձեմարանի խախտումէն օգտուելով՝ ձեռք նետած էին կրկին օրացոյցի տպագրութեան՝ զոր իրենց մենաշնորհն ընել կը կարծէին : Միւսնեմտիտեան եւս իր կարգին անոնց նիմաւորց Բերականը տպելով չդեղելիք ծախս հանել : Այս մրցումը կը զայրացուէ իր ակոյեանները որոնք կը դիմեն ինչոյն իրենց բարեկամը եղող օրուան Պատրիարքին (Ասատուր), անոր տպարանը զոցել տալու համար : — **ՄԷԱՐԻՔԸ** գոյութիւն չունէր տակաւին . այս կարգի գործեր ձեռննաստրեանը մէջն էին Կոյս. Տըպարանի վերատեսչութեան՝ որուն գիր մը մատուցանելով Պատրիարքը կը հասնի իր նպատակին . չէ՞ մի որ Նորին Ամենապատուութենէն նրաման չառած՝ Միւսնեմտիտեան մեջքը գործած էր տպարան բանալու... , այսինքն իւրովսանն ստատրելու ազգային յառաջդիմութեան գործին : — Դեպքը մինչեւ Բարիզ արձագանգ գտած էր . և Օսմ. դեսպանատան Ա. քարտուղար Յակոբ Կրճիկեան ինքնաբերաբար ընդվզած Հայուն բանկագին զարգացումը հարուածող այդ աննարկի տնօրինութեան դեմ՝ շուշանար ազդու աղերսագիր մը յղելու Արապին Գործոց նախարար Քշիտ Բաշայի, խնդրելով վերաբացումը տպարանին : Մինչ այս մինչ այն, կը նրամարեցունեն ազգասեր (ի՞նչ կ'ըսեմ) ազգակնասեր Պատրիարքին , որուն կը յաջորդէ Իզմիրի առաջնորդ Մատթոս եպսկ. (յետոյ Կարողիկոս), իր առաջին գործն ընելով «բազիր» մը գրել, տպարանը բանալ տալ վաղ-խաղակի և ի՛ր իսկ երաշխաւորութեամբ ստանալ տպագր., արտօնագիր մը, նաեւ «Հայաստան» անուն լրագիրին տպագրութեան նրամանագիրը Միւսնեմտիտեանի անուամբ առնելով՝ անոր սպել տալ նոյն բերքը : Ատոր Ա. բիւր յոյս տեսած է 1 Յուլիս 1846 ին՝ Յ. Տերոյնցի խմբագրութեամբ : — Այլեւս բոլորովին նուիրում տպագրական արուեստին՝ կը շանայ իր կատարելութեանը հասցունել զայն, կարելի եղածին չափ : Հետզհետե կը շինէ 11, 14 և 18 **բուերօ** տառերը, որոնց գլխագրերն ու նօտրերը միասին հաշուելով՝ 13 տեսակի կը բարձրացունէ գանոնք քիչ ատենի մէջ : Նորանար 8 բուերօ «գիր մըն ալ շինեցի — կը խոստովանի իր կենսագրականին մէջ — շիտակ սիւներով, որուն շնորհիւ սրջաւոր «գրերն ու ծոցագրերը մէջտեղէն վերնալով և գրերուն տեսակը քիջնալով, քե՛ ձուլելու և մաքրելու, և քե՛ շաքրելու շատ դիւրութիւն կու տար : Արնետոն եղողներն «բաւձեւ աղէկ կը նաակընան» : — Պողպատի վրայ հայ տառեր դաշն ու դիւրին գծելու համար կը ննարէ մասնաւոր գործիք մը, նաեւ մեքենայ մը, (իր ժամանակին համար ստուգիւ մե՛ծ յաջողութիւն), որուն մէջ սրողատ և սրչինձ տեղաւորուելով, յառաջ բերած ճնշմամբ՝ հայր գիրերէն դիւրաւ կը նանէ մայր գիրերը, որոնցմով է որ կը

**Օ Ր Ա Յ Ո Յ Ց**  
Թ Ո Ւ Ա Կ Ե Լ Է Ն Ք Ի Մ Ս Ո Ս Ի  
1842  
**Ե Ի Հ Ա Յ Ո Յ**  
Բ Մ Ղ Ա  
  
Հ Բ Ա Մ Ա Ն Ա Ի  
Տ Ե Ա Ռ Ն Ս Տ Ե Փ Ա Ն Ն Ո Ս Ի Ա Բ Գ  
Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ի Ե Ի Պ Ա Տ Ի Ա Լ Գ Ի  
Կ Ո Ս Ա Ն Դ Ն Ո Ւ Պ Օ Ի Ս Ի  
  
Յ Ի Ի Ս Գ Ի Ի Տ Ա Լ Գ  
Ի Տ Ե Մ Ը Ը Ե Ի Ս Ո Բ Գ Ե Ռ Ո Ս Ա Ն Ե Մ Ի

Սկիւտարի «ձեմարան»,ին  
սպարանգն ելած վերջին օրացոյցը

ձուլոյն կապարեայ տառք : Ասանկով մեծապէս դիւրացուցած կ'ըլլայ տառերու փորագրութիւնն ու ձուլումը, կեանքին մէջ բնաւ ուսումնասիրած և ընդօրինակած չըլլալով բարնութիւնները երոպական ճարտարարուեստին : Իր յօրինած այդ գիրերով է որ սպուլած են նոյն ատենուան գրերէ բոլոր հայերէն գիրքերն ու բերքերը, մանաւանդ «Մասիս»ը : Աշխատի որ, երբ անիկա Օսմ. այրութիւնին կաշապարներն ամենավերջին կատարելութեամբ կերտելու ջլատիացունէր իր կեանքին յաւազոյն տարիները, տարակոյս չկայ քէ իր տպարանն օժտուած պիտի ըլլար աննախընթաց կերպով ճոխ մերքով մը մնարովեան զանագան ու զարմանագան տառերու :

\* \* 1847ին էր որ յոյս ընծայեց **Յայտարարութիւն վասն նորակերտ սառ իցս** տխուրով տետրակ մը : Գաղափար մը տուած ըլլալու համար իր գրեչակերպին, տետրեանց և իր դաւանած սկզբունքներուն մասին, ստորեւ կ'արտագրենք անիկ բանի մը հատուած . — «Տպագրութեան գիտար գրականութեան ու գիտութիւններուն բարգաւաճութեանը ի՛նչ նպաստ «ընելը մտածելով, այս ազնիւ գիտին օրէ օր սպաճաւանայուն վրայ բոլոր մարդիկ աշխատին